ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի 2016 թվականի ընթացքում կատարած աշխատանքների

I. Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների բնագավառ:
2016 թվականի ընթացքում բնակիչներից ստացվել է 291 դիմում, հարազատին կորցրած ընտանիքներից, գույքահարկի և հողի տույժերի զիջման դիմումների համար կատարվում է առանձին հաշվառում: Դիմումները ժամանակին քննարկվել և պատասխանվել են:
Ստացվել է 499 գրություն, որոնք ժամանակին քննարկվել և պատասխանվել են , չի պատասխանվել 2 գրության, գտնվում են քննարկման փուլում, գրությունները վերաբերվում են նաև դատական նիստերի մասնակցությանը,
տարբեր հարցերով մասնակցել ենք 56 դատական նիստի,
վարչական պատասխանատվության ենթարկվելու վերաբերյալ կայացվել է 3 որոշում,
կայացվել է՝ համայնքի ղեկավարի 68 որոշում, արձակվել է 38 կարգադրություն,
հրավիրվել է ավագանու 14 նիստ, որից 2-ը հետաձգվել է քվեն չապահովելու պատճառով,
կայացվել է ավագանու 56 որոշում,
աշխատակազմի քարտուղարի՝ 14 հրաման
կազմվել է թվով 4 կտակ, լիազորագիր -2
կայացվել է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 8 որոշում
տրվել է 1484 տեղեկանք, 10 բնութագիր, 65 հասցեի որոշում և քաղվածք:

II. Ֆինանսների բնագավառ –
2016 թվականի ընթացքում ընդամենը հավաքագրվել է 277 մլն 957.44 հազ.դրամ եկամուտ, որը կազմում է բյուջեի տարեկան պլանի 103.3 %-ը, 2015 թվականի նույն ժամանակաշրջանում հավաքագրվել էր 269 մլն 588.13հազ.դրամ գումար՝ այսինքն 106.6 %-ը, կամ 2016թ. պակաս է հավաքագրվել 3.3%-ով,սակայն գումարային հարաբերությամբ ավել է հավաքագրվել 8մլն369.31հազ.դրամ: Չնայած 2016թ. զուտ եկամուտը գումարային հարաբերությամբ 2015թ.նկատմամբ ավել է հավաքագրվել 1մլն.200.93հազ.դրամ գումարով, սակայն տոկոսային հարաբերությամբ 2016 թվականի բյուջեն հավաքագրվել է 108.9 %-ով, իսկ 2015 թվականի նույն ժամանակաշրջանում հավաքագրվել էր 117.9 %-ով, կամ այս տարի պակաս է հավաքագրվել 9 %-ով: Զուտ եկամուտի պակաս հավաքագրումը բացատրվում է բնակչության սոցիալ-տնտեսական վատ վիճակով.

	2015թ.			2016թ.		
	Տարեկան պլան	Փաստացի կատար.	%	Տարեկան պլան	Փաստացի կատար.	%
1.Հարկային եկամուտներ	75500,0	83289.668	110.3	82700.0	90214.963	109.1
1.1 Հողի հարկ	9000.0	12342.562	137.1	11000.0	12703.305	115.5
1.2 Գույքահարկ շինություններից	40000.0	40182.059	100.5	42000.0	43260.691	103.0
1.3 Գույքահարկ փոխադրամիջոց.	26500.0	30765.047	116.1	29700.0	34250.967	115.3
2. Ընդամենը տեղական տուրք	6575.0	6653.540	101.2	6439.6	6501.44	101.0
Նոր կառուց. օբյեկ. շին.թույլտ.	190.00	190.550	100.3	260.00	272.9	105.0
Օբյեկտների վերակառուցելու համար	15.00	15.800	105.3	15.00	14.7	98.0
Օբյեկտների քանդման համար	10.00	17.100	171.0	10.00	12.2	122.0
Ժամը 24:00-ից հետո աշխ. թույլ	340.00	343.200	100.9	300.0	300.4	100.1
ա/Շահումով խաղ.կազմակերպ.	40,0	41,900	104,8	0	0	0

Օդի և ծխածուխի վաճառք	900.000	902.800	100.3	850.00	852.750	100.3
Բացօթյա վաճառք	1100.000	1102.100	100.2	998.000	1047.9	105.0
ա/ այլ ապրանքի վաճառքի թույլտ.	700.00	701.900	100.3	448.00	448.1	100.0
բ/վառելիքաքսայուղերի վաճ.թույլ.	400.00	400.200	100.1	550.00	599.8	109.0
Գովազդի տեղ. թույլտվություն	4000.00	4056.290	101.4	3936.6	3962.890	100.7
Արխիվից տրվող փաստաթղթեր	20.00	25.70	128.5	70.0	37.7	53.9
3.Պաշտոնական դրամաշնորհ.	144018.4	144008.40	100.0	144008.4	144008.3	100.0
3.1 Պետ. բյուջեից դոտացիա	100238.3	100228.3	100.0	105417.3	105417.3	100.0
3.2 Ազգ.նվազարանների գծով սուբվենցիա	12536.60	12536.60	100.0	12536,6	12536.5	100.0
3. Պետ բյուջեից նվազագ.աշխ տարբերություն	31243.5	31243.5	100.0	26054.5	26054.5	100.0
4. Այլ եկամուտներ	6256.6	6400.167	102.3	7642.0	8773.117	114.8
Ինքնակամ շին. օրինականաց.	1700.1	1617.456	95.1	2922.0	3739.374	127.9
Տուգանք ինքնակամ շինութ.համ.	398.50	399.100	100.2	240.0	239,468	99.9
Աղբահանություն	2778.00	2777.50	100.0	3100.0	3158.60	101.9
Վարձ. հողի վճար	1000.00	1186.207	118.6	1000.0	1237.475	123.7
Տեղական վճար	380.0	419.9	110.5	380.0	398.200	104.8
22 Պետ. Բյուջեից ֆին.աջակց.քաղաք վնասված ընտանիքներին,հասցեի որոշման և բնութագրի տրամադրում	450.00	379.150	84.3	1210.0	1205.6	99.6
Ընդամենը վարչ. բյուջե	232800.0	240730.92	103.4	242000.0	250703.42	103.6
Հողի օտարումից մուտքեր	4903.020	13760.226	280.6	2332.65	2586.67	110.89
ֆ/բ ազատ մնացորդ	15096,98	15096,98	100.0	24667.35	24667.35	100.0
Ընդամենը ֆոնդ բյուջե	20000.0	28857.206	144.3	27000.0	27253.02	100.9
Ընդամենը	252800.0	269588.10	106.6	269000.0	277957.44	103.3
Զուտ եկամուտ	93684.67	110482.72	117.9	100324.25	109281.79	108.9

2. Փարաքար համայնքի 2016թ.բյուջեի տարվա ընթացքում ծախսերի կատարման հաշվետվությունը ըստ գործառնական դասակարգման և 2015 թվականի նկատմամբ համեմատական վերլուծությունը

2016 թվականի ընթացքում կատարվել է ծախսեր 252 մլն 555.895 հազ.դրամ, որը կազմում է բյուջեի 93.9 %-ը 2015թ. նույն ժամանակաշրջանում կատարվել էր ծախսեր 160մլն 862.1 հազ.դրամ, այսինքն 62.8 %-ը, պակաս ծախս է կատարվել 1.3 %-ով, սակայն 2016թ, փաստացի կատարված ծախսը 2015թ, համեմատ ավել է կատարվել 3 մլն 930.5 հազ.դրամով:

N		Ծախսերի անվանումը	2015թ			2016թ		
Խումբ	Ենթախումբ		Տարեկան պլան հազ.դրամ	Փաստացի կատար. հազ.դրամ	%	Տարեկան պլան հազ.դրամ	Փաստացի կատար. հազ.դրամ	%
I		Վարչական բյուջեի ընդամենը	232800.0	225746.472	97.0	242000,0	229711,991	94.9
1		Տեղական ինքնակառավարում	55361.1	51965.92	93.9	61690,00	53354,438	86.5
2		Հանրային այլ ծառայություններ	1500,0	1345.1	89.7	4660,000	3876,000	83.2
4		Կրթություն և գիտություն	104272,4	104272.4	100.0	106010,0	106009,9	100

	5	Տրանսպորտային սարքավորումներ	748,0	398,0	53.2	500,0	500.0	100.0
	6	Նյութեր և պարագաների ձեռք բերման ծախսեր	5000,0	4627.046	92.5	2476.69	2476.69	100.0
	7	Նախագծահետազոտական ծախսեր	0	0	0	500,0	500,0	100
Ի		Ընդամենը ծախսեր	252800.0	244920.777	96.9	269000,0	252555,895	93.9

Փարաքար համայնքի 2016թ. տարվա ընթացքում կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությունը

1.1 Համայնքապետարանի աշխատակազմի պահպանման համար 2016 թվականի տարվա ընթացքում կատարվել է ծախսեր 55 մլն 246 127 հազ.դրամ, որից աշխատավարձ՝ 45 մլն 696.726 հազ. դրամ, կատարվել է էներգետիկ, կոմունալ և կապի ծառայությունների դիմաց ծախսեր 1մլն 133.03 հազ.դրամ, ապահովագրական ծախսեր՝ 627.0 հազ.դրամ,գործուղման ծախսեր՝160.5 հազ.դրամ, կատարվել է համակարգչային և տեղեկատվական ծառայությունների դիմաց ծախսեր 398.4 հազ. դրամ: Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների գծով կատարվել է ծախս 1մլն9998,945հազ.դրամ /Գործուղման ծախս Ֆրանսիայի Ստրասբուրգ քաղաք՝ Եվրոպայի Խորհրդի Տեղական և Տարածաշրջանային Իշխանությունների Կոնգրեսի 30-րդ պլենար նիստին մասնակցելու համար: Ձեռք է բերվել ցուցանակ և վճարվել ցրիչի պարտականություններ կատարելու համար/:Մասնագիտական ծառայությունների գծով կատարվել է ծախս 968.162հազ.դրամ՝ /Անասնաբուժա-հակահամաճարակային հետազոտության համար, Դոմեն՝ /paragar.am/ կայքի պահպանման, կրակմարիչների լիցքավորման, ծառայողական մեքենայի տեխ զննման համար/: Փարաքարի համայնքապետարանի թվով 13 համակարգիչների և պատճենահանման սարքերի քարթրիջների լիցքավորման և սարքերի վերանորոգման համար կատարվել է ծախս 369.0 հազ.դրամ և շտապ օգնության մեքենայի վերանորոգման համար ձեռք է բերվել ավտոպահեստամասեր 351.9հազ.դրամ,վերանորոգվել է մշակույթի տան ուժեղացուցիչը՝33.0հազ.դրամ: Ձեռք է բերվել գրենական պիտույքներ 161.225հազ.դրամ, ավտոմեքենայի բենզին 1մլն113.75 հազ.դրամ, և տրանսպորտային նյութեր 74.0 հազ.դրամ: Ձեռք է բերվել տնտեսական և մաքրիչ նյութեր 100.0հազ.դրամի, ձեռք է բերվել տարեմուտի լույսեր44.8 հազ.դրամի : Կատարվել է պետական տուրքի վճար 123,0 հազ.դրամ, ձեռք է բերվել 414,0հազ.դրամի համակարգիչ Corei 5 և 547.0հազ.դրամի սերվեր Dell Power EdgeT20, անխափան սնուցման սարք APC Back-UPS:

1.2 1.2 Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների գծով կատարվել է ծախսեր 3մլն 876.0 հազ.դրամ,որից 1մլն92.0հազ դրամ տրվել է Փարաքարի բուժ.ամբուլատորիաներին՝ շտապ օգնության վարորդի աշխատավարձ և դիզ.վառելիքի ձեռք բերման ծախս, 85.1 հազ.դրամ Համայնքների միությանը, որպես անդամավճար, ձեռք է բերվել նվերներ 2մլն148.9 հազ.դրամ գումարի՝ համայնքի 20 նորապսակ զույգերի համար «Տեարն-ընդառաջ» տոնի կապակցությամբ՝300.0հազ.դրամ, «Համայնքը» խորագրող տեսարաններով նվերներ 206.5 հազ.դրամի, «Համայնքը» խորհրդանշող դրոշներ 400.0հազ.դրամ,հուշամեդալ՝ Փարաքար համայնքի դեկտմբերի անվամբ 356.0հազ. դրամ, և համայնքի հանրակրթական դպրոց հաճախող թվով 120 առաջին դասարանցիներին 238.3 հազ.դրամի գրենական պիտույքների հավաքածու,համայնքի նախադպրոցական կրթության սաներին Ամանորյա ներկայացման տոմսեր՝250.0հազ.դրամ, համայնքի ենթակա կազմակերպությունների աշխատակիցների մինչև 6 տարեկան երախաներին և թոռնիկներին Ամանորյա նվեր տոպրակներ՝308.0հազ.դրամ, Արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների ընտանիքներին Ամանորյա նվեր տոպրակներ 90.1հազ.դրամ: Կազմակերպվել է Ամանորի կապակցությամբ միջոցառում համայնքի ենթակա բոլոր կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ թվով 99 մարդ 495.0հազ.դրամ:

1.3 Սոց օգնությունների գծով ծախսեր է կատարվել 7մլն 829.882 հազ.դրամի: Թվով 183 ընտանիքի տրվել է դրամական օգնություն 7մլն.239.882 հազ.դրամ, որից 2մլն.987.5 հազ.դրամը վճարվել է դժբախտության մեջ հայտնված 58 ընտանիքների, և ընտանիքում 4-րդ երեխա ծնվելու կապակցությամբ 1 ընտանիքի տրվել է 51,5հազ.դրամ, անապահով 58 ընտանիքի տրվել է 1մլն.314.4հազ.դրամ,ԴՕՍԱԱՖ-ում սովորող երկու նորակոչիկների տրվել է ճանապարհածախս 61.182հազ.դրամ, Հայրենական Մեծ պատերազմի ժամանակ թիկունքում ծառայած 4 մասնակցի տրվել է դրամական օգնություն 164.8հազ.դրամ, Չեռնոբիլի աղետի վերականգման աշխատանքների մասնակցության համար 6 մասնակիցի տրվել է 154.5 հազ.դրամ օգնություն, Արցախյան պատերազմում զոհված 5 ազատամարտիկների ընտանիքների տրվել է դրամական օգնություն 206.0հազ.դրամ,Արցախյան պատերազմում վիրավոր 6-ընտանիքի տրվել է 206.0հազ.դրամ, Արցախյան քառօրյա պատերազմին մասնակցած 16 ազատամարտիկի տրվել է 988.8 հազ.դրամ, Արցախյան քառօրյա պատերազմից առաջացած վնասները և ավերվածությունները վերականգնելու նպատակով Լեռնային Ղարաբաղի հանրապետության ,«ԱՐՑԱԽ» բանկում բացված հաշվեհամարին փոխանցվել է 200.0հազ.դրամ: Քամուց և կարկտահարությունից տուժած 22 բնակիչների տրվել է օգնություն 865.2 հազ.դրամ: Թաիրովի և Փարաքարի բուժ.ամբուլատորիաներին յուրաքանչյուրին տրվել է ֆինանսական աջակցություն 100.0հազ.դրամ: Փարաքարի միջնակարգ դպրոցի անապահով երեխաների գրքի արժեք է փոխանցվել 140.0հազ.դրամի: 190.0հազ դրամ տրվել է համայնքի 4 տարեց բնակիչների, 50.0հազ.դրամ ֆին աջակցություն է տրվել Ֆլորա Հարությունյանին UWC Dilijan միջազգային քոլեջ անվճար ընդունվելու համար, փոխանցվել է 2016թ հեռուստամարաթոնին 40.0հազ.դրամ և պետական հուշարձանների պահպանման հայկական ընկերությանը 10.0հազ.դրամ:

1.4 «Բարեկարգում» տնօրինության միջոցով կատարված ծախսը կազմում է՝ 60մլն 524.675 հազ. դրամ, որից աշխատավարձ՝ 26 մլն 175.476 հազ.դրամ: Կատարվել է կեղտաջրերի հեռացման կայանի պոմպերի էլեկտրոէներգիայի ծախս 1մլն 403.272 հազ.դրամ, կատարվել է խմելու ջրի վարձ 456.436 հազ.դրամ, աղբավայրի վճար 1մլն 119.933 հազ.դրամ, կատարվել է ավտոմեքենայի ապահովագրական վճար 80.7 հազ.դրամ, փոխանցվել է աղբատար մեքենայի վարձակալության համար 650.0 հազ.դրամ, կատարվել է ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 955.0 հազ.դրամի /Անցումները մաքրելու, աղբատար բանվորին փոխարինելու համար և Երևանյան փողոցի աղբի բարձման համար/: Կատարվել է լուսավորության հենասյուների գոդում,

աղբատար մեքենայի բանվորին փոխարինելու համար վճարում և էլեկտրոնային ստորագրության համար, ջրահեռացման ցանցի մաքրման և տրանսպորտային միջոցի գնահատման համար՝ 698.0 հազ.դրամ: Կատարվել է Եղեռնի հուշարձանի հարակից այգու մշակման և պահպանման համար 529.096 հազ.դրամի ծախս,Բիոլճակի մաքրում վերամբարձ կռունկով՝440.0 հազ.դրամ և վճարվել է 145.0 հազ.դրամ աղբատար բանվորին փոխարինողին: Կատարվել է աղբատար մեքենայի վերանորոգում-712.6 հազ.դրամ, ձեռք է բերվել աղբատար մեքենաների համար սեղմված գազ-3մլն 947.045 հազ.դրամի և անվադողեր 505,0հազ.դրամի:Ստացվել է գրենական պիտույքներ 70.0հազ.դրամ և աղբահանության գանձման համար չեկեր 49.999հազ.դրամ: Ձեռք է բերվել 10.79հազ.դրամի ՊՎՔ խողովակ և սև մետաղական խողովակներ 90.12հազ.դրամ՝ Թաիրովի 1-ին շենքի կոյուղագծերի վերանորոգման համար, ձեռք է բերվել 291.384 հազ.դրամի շինանյութ Բիոլճակի էլ.վահանակի վերանորոգման համար, բիոլճակի մաքրման և Մայրաքաղաքային փող. բարեկարգման համար կատարվել է ծախս 402.040հազ.դրամ: Կատարվել է Թաիրովի գրադարանի վերանորոգում 2մլն.105.4 հազ.դրամ և Փարաքար համայնքի օրական կարգավորման ջրամբարի ցանկապատի կառուցման համար 1մլն.272,910հազ.դրամ և Թաիրովի Մամիկոնյան փողոցի 7-րդ շենքի ռոզման առվի վերանորոգում 2մլն.310.0 հազ.դրամի: Փարաքարի և Թաիրովի մանկապարտեզներում տեղադրվել է ջրատաքացուցիչներ 1մլն.8.0հազ.դրամի: Փարաքարի մանկապարտեզի համար ձեռք է բերվել 10 հատ եռահարկ մահճակալներ՝800.0 հազ.դրամ գումարով: Ձեռք է բերվել ՋԻԼ-130 մեքենայի խցիկ և թափք 500.0 հազ.դրամ: Կատարվել է Բիոլճակի պոմպի վերանորոգում 198.0 հազ.դրամ, Ջիլ մեքենայի մարտկոց 78.0 հազ.դրամ: Բազալտե խճով խճապատվել է Երվանդ Քոչար, Անդրանիկի և Գրիգոր Լուսավորիչ փողոցները 834.490 հազ.դրամ: Ձեռք է բերվել 378.0 հազ.դրամի ազբոշիֆեր և 1մլն 264.2 ցինկապատ թիթեղ փոթորիկից տուժած ընտանիքների տանիքների համար: Փարաքարի մանկապարտեզի վերանորոգման համար կատարվել է նախագծահետազոտական ծախսեր 500.0հազ. դրամ,Ռ.Արշակյան-Սնան փողոցների միջև ընկած Նաիրի փողոցից 60 մ երկարությամբ հին կոյուղագծերը փոխարինվել են նորով 2299.44 հազ.դրամ, Երևանյան փողոցի /խաչմերուկից դեպի միջնակարգ դպրոցը/ փողոցային էլեկտրալուսավորության 350մ երկարությամբ կառուցվել է լույսային գիծ 2331.0 հազ.դրամ: Կատարվել է ասֆալտապատում Նաիրի և Մամիկոնյան փողոցներում 3780.0 հազ.դրամ, համայնքապետարանի դռները և պատուհանները փոխարինվել են եվրոդռներով և եվրոպատուհաններով 1մլն260.744 հազ.դրամ:Փոխարինվել է արվեստի դպրոցի սան հանգույցի դուռ և պատուհանը՝ 122.6 հազ.դրամ, վերանորոգվել է Թաիրովի մանկապարտեզի 2 բաց պատշգամբները՝750.0հազ.դրամ:

1.5 Փարաքարի այլ մշակույթային կազմակերպությունների գծով փոխանցվել է սուբսիդիա և նպատակային հատկացում 20 մլն. դրամ,Փարաքարի մանկապարտեզին փոխանցվել է սուբսիդիա և նպատակային հատկացում 32մլն.100,0հազ.դրամ, Թաիրովի մանկապարտեզին՝ 20մլն 600.0հազ. դրամ, արվեստի դպրոցին՝ 40մլն 773.4հազ դրամ և ազգային նվագարանների անվճար ուսուցման համար հատկացվել է ընթացիկ դրամաշնորհներ 12 մլն 536.5հազ.դրամ:

III. Պաշտպանության բնագավառ

2016 թվականի ընթացքում՝ փետրվարին 56 զորակոչային տարիքի անձիք մասնակցել են նախազորակոչային բժշկական ստուգման և վերցվել՝ հաշվառման, 16 պատանիներ զորակոչվել են Հայկական բանակ: Հունվարի 28-ին բանակի կազմավորման օրվան և մայիսի 9-ի՝ հաղթանակի օրվան նվիրված միջոցառումների ժամանակ արցախյան պատերազմի ազատամարտիկները մեծարվել են և ստացել դրամական պարգև:

Համայնքից 2-ի պատանի ընդգրկվել է սովորելու «Հայաստանի ԴՕՍԱԱՖ» էջմիածնի ավտոդպրոցում: 14 պատանիներ ծանուցվել են ավտոդպրոցում սովորելու համար:
1989-99 թթ ծնված, համայնքում հաշվառված և էջմիածնի զինվորական կոմիսարիատում հաշվառման չկանգնած 141 պատանիների համար ճշտվել են հաշվառման չկանգնելու պատճառները և ներկայացվել են համապատասխան տեղեկանքներ:
Համայնքից քառօրյա պատերազմին մասնակցել են 15 կամավորներ:
ԼՂՀ-ում մարտ ամսին կազմակերպված և անցկացված պլանային զորահավաքային միջոցառմանը համայնքից մասնակցել է 3 զինապարտ:
Էջմիածնի զինկոմիսարիատ է ներկայացվել համայնքում հաշվառված 2001 թվականին ծնված պատանիների անվանացանկը:
Զինկոմիսարիատ է ներկայացվել տեղեկատվություն համայնքում հաշվառված, ինչպես նաև փաստացի առկա, բայց համայնքում չհաշվառված սարքին և անսարք ավտոտեխնիկայի վերաբերյալ: Պարբերաբար կատարվում է զինկոմիսարիատի կողմից տրվող տարատեսակ ճշտումներ: Զինապարտների զրանցման և դուրս գրման մատյաններում կատարվում են համապատասխան նշումները:

IV. <u>Քաղաքաշինություն և հողօգտագործման բնագավառ</u>

- Կառուցապատողներին տրվել է 21 ճարտարապետահատակագծային առաջադրանք, որից
- Համաձայնեցվել է 24 նախագիծ
- Տրվել է 13 շինարարության թույլտվություն, որից
  8 -ը՝ նոր կառուցվող բնակելի տան,
  4-ը՝ առևտրի օբյեկտի,
  1-ը՝ սառնարանային համալիրի և զրասենյակի,
- Տրվել է ավարտված շինարարությունների շահագործման փաստագրման 5 ակտ /բնակելի տան/
- Կայացվել է հողի գործառական նշանակության փոփոխության 3 որոշում,
- Կայացվել է ինքնակամ շինությունների օրինականացման 8 որոշում,
- Ինքնակամ կառուցվող շինությունը և զբաղեցրած հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին 2 որոշում,
- Հողի գործառական նշանակության փոփոխության 2 որոշում:
- Ուղարկվել է ինքնակամ շինության դադարեցման 12 ծանուցագիր
- Կայացվել է գույքային իրավունքների վերականգնման 6 որոշում
- Պարբերաբար տեղեկատվություն է ներկայացվել Արմավիրի մարզպետարան, Քաղաքաշինության նախարարություն, Քաղաքաշինական պետական տեսչություն, Արտակարգ իրավիճակների նախարարություն,
  Վիճակագրական վարչություն և այլ պետական կառույցներ:
- Տրվել է հասցեների ճշտման և նոր հասցեների տրամադրման 21 որոշում:

<u>V. Բարեկարգման և կոմունալ տնտեսության բնագավառ</u>

2016 թվականի ընթացքում հիմնովին վերանորոգվել է Թաիրովի զրադարանը և հարակից բակը:
Ցանկապատվել է Փարաքարի օրական կարգավորման ջրամբարը (ՕԿՋ), պատրաստվել են Երևանյան փողոցի լուսավորության հենասյուները, անցկացվել է Մհեր Մկրտչյան, Չարենցի, Տերյան, Նաիրի փողոցի զիշերային լուսավորությունը:Վերանորոգվել է Թաիրով գյուղի 6-րդ շենքի լուսավորությունը:
Ձեռք է բերվել խիճ և բարեկարգվել Անդրանիկի,Քոչարի փողոցները: Պարբերաբար կատարվել է մաքրման կայանի լճակների տիղմից մաքրման և տեղափոխման աշխատանքները, հիմնովին վերանորոգվել է մաքրման կայանի էլեկտրական վահանակը:

ՈՒժեղ քամուց տուժած ընտանիքներին օգնելու նպատակով ձեռք են բերվել ցինկապատ թիթեղներ, ազբոշիֆերներ և տրամադրվել:
Փոխվել է աղբատար մեքենայի (ՋԻԼ) ուղեղրախցիկը, թափքը, շինաղբից մաքրվել է Փարաքարից Մուսալեռ ընկած մայրուղու հարակից հատվածը:
Հռոմի պապի այցի կապակցությամբ մաքրվել և բարեկարգվել է օդանավակայանից դեպի Երևան- Էջմիածին ճանապարհահատվածները, սպիտակեցվել են ծառերի բները:
Վերանորոգվել և ասֆալտապատվել են Թաիրովի Վ. Մամիկոնյան և Փարաքարի Նաիրի փողոցները մոտ 1100 քմ հատվածը, հիմնովին վերանորոգվել է Թաիրովի մանկապարտեզի պատշգամբները, փողոցային լուսավորություն է անցկացվել Փարաքարի Երևանյան փողոցում 350մ. փոխվել է Նաիրի փողոցի կոյուղագծի 60 մետր հատվածը, Վերանորոգվել է Թաիրովի Մայրաքաղաքային փողոցի ռոզման առվի 35 մետրանոց հատվածը:
Ձեռք է բերվել 57 մմ տրամաչափի մետաղական խողովակներ Հ. Ներսիսյան փողոցի գազաֆիկացման համար. հիմնովին վերանորոգվել է Թաիրովի 7 րդ շենքի հարևանությամբ գտնվող ռոզման առուն, պարբերաբար մաքրվել է Փարաքարի Նաիրի փողոցի կոյուղագիծը.
Վերանորոգվել է Կոմիտաս փողոցի ջրագծի ՊՎՔ խողովակի հանգույցները:
Պարբերաբար փոխվել են փողոցային լուսավորության լամպերը:
Հիմնովին փոխվել է Փարաքարի պոլիկլինիկայի ջրագիծը և ներքին ցանցը.
Փարաքարի մանկապարտեզի համար ձեռք է բերվել եռահարկ մահճակալներ,համայնքի երկու մանկապարտեզներում տեղադրվել են արևային ջրատաքացուցիչներ.
Փոխվել է գյուղապետարանի պատուհանները, արվեստի դպրոցի երկու սանհանգույցների հիմնովին վերանորոգման համար ձեռք են բերվել շինարարական նյութեր, փոխվել է մեկ դուռ և պատուհան:
Վերանորոգվել և նախապատրաստվել են ձմռանը աղբատար մեքենաները.

VI Առևտրի և սպասարկման բնագավառ,
Ա. Համաձայն առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության կանոնների, իրականացվում է այդ ոլորտի գործունեությունը.
Տարվա ընթացքում տրամադրվել է 24 թույլտվություն համայնքի տարածքում ոգելից խմիչքների, ծխախոտի վաճառքի համար, 6 թույլտվություն,՝ բացօթյա վաճառք կազմակերպելու համար,
արտաքին գովազդի տեղադրման համար տրվել է 30 թույլտվություն:
Բ. „Առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների„ ոլորտում իրականացվում է հսկողություն և դրանց արդյունքներն են.

- Հաշվետու ժամանակաշրջանում գործող օբյեկտների քանակը
  Առևտրի -35
  Ռեստորան- 10
  Կենցաղային ծառայություն- 9
- Ստուգված օբյեկտների քանակը
  Առևտրի - 37
  Հանրային -14
  Կենցաղային ծառայություն- 13
  Արձանագրված խախտումներ չկան:

VII. <u>Առողջապահության բնագավառ</u>
Առողջապահական բնագավառ 2016թվական. «Փարաքարի ԲԱ» -ում հաշվառված է 5542 բնակիչ, որից 0-18 տարեկան՝ 1551 երեխա, 18 տարեկան և բարձր տարիքի՝3991 բնակիչ: Ամբուլատորիայի ֆինանսավորումը կատարվում է ՀՀ առողջապահության պետական գործակալության կողմից, որը 2016 թվականին կազմել է 28977.1 դրամ:

ամբուլատորիայում կատարվել է 11650 հաճախում, 1215 տնային այց, ստացիոնար է ուղեգրվել 187 հիվանդ: Արձանագրվել է 44 մահ: Ամբուլատորիայում կատարվել է 275 ԷՍԳ (էլեկտրասրտագրություն), 379 գլյուկոմետրիա, 663 արյան և 512 մեզի ընդհանուր քննություն: 2016թ. ըստ բժշկական ցուցումների բնակիչներին տրամադրվել են ուղեգրեր նեղ մասնագիտական խորհրդատվության և լաբորատոր գործիքային հետազոտությունների համար: 2016 թվականին անվճար և արտոնյալ պայմաններով 2413.4 դրամի դեղորայք է տրամադրվել բնակչությանը:

«Փարաքարի ԲԱ»-ում 2016թվականին սպասարկվել է 75 հղի: Երեխաների թիվը՝ 93: Ամբուլատորիայում կատարվել է 1908 պրոֆ. պատվաստում:

Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Հիվանդությունների վերահսկում և կանխարգելում» վարկային ծրագրի շրջանակներում կատարվել է 380 գլյուկոմետրիա (գլյուկոզայի որոշումը արյան մեջ) և 89 PAP քսուկի հետազոտություն:

«Թաիրովի ԲԱ» ՀՈԱԿ-ը սպասարկում է 3048 բնակչի, որից 0-18 տարեկան՝ 757 երեխա, 18տարեկան և բարձր տարիքի՝2291 բնակիչ: Ամբուլատորիայի ֆինանսավորումը կատարվում է ՀՀ առողջապահության պետական գործակալության կողմից, որը 2016 թ-ի համար կազմել է 14.800.2 դրամ: 2016 թվականին ամբուլատորիայում կատարվել է 5237 հաճախում: 2016 թվականին կատարվել է 110 193տնային այց, ստացիոնար է ուղեգրվել 107 հիվանդ: Ամբուլատորիայում կատարվել է 159 ԷՍԳ (էլեկտրասրտագրություն), 438գլյուկոմետրիա: 2016թ. ընթացքում ըստ անհրաժեշտության բնակիչներին տրամադրվել են ուղեգրեր նեղ մասնագիտական խորհրդատվության և լաբորատոր գործիքային հետազոտությունների համար 1165: 2016 թ. անվճար և արտոնյալ պայմաններով 1215542 դրամի դեղորայք է տրամադրվել բնակչությանը:

2016 թ.ֆինանսավորումը կազմել է 15181365դրամ:

«Թաիրովի ԲԱ»-ում հաշվառվել է 9 հղի: Տարվա ընթացքում ծնված երեխաների թիվը՝ 19: Ամբուլատորիայում կատարվել է 406 պրոֆ. պատվաստում:

Կատարվել է սքրինինգ շաքարային դիաբետի վաղ հայտնաբերման նպատակով 225 և 57 ՊԱՊ քսուքի հետազոտություն :

VIII . Փարաքար համայնքի <<Մշակույթ և սպորտ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2016 թվականի ընթացքում կատարված աշխատանքների

Փարաքար համայնքի «Մշակույթ և Սպորտ» ՀՈԱԿ-ը 2016 թվականի ընթացքում կազմակերպել է հունվարի 28-ին՝ Հակական բանակի տոնի, մայիսի 9-ին՝ հաղթանակի օրվա և հունիսի 1-ին՝ երեխաների պաշտպանության օրվան նվիրված միջոցառումներ:

Կազմակերպել է ինտելեկտուալ վիկտորինա մրցույթ Փարաքարի, Թաիրովի, Պտղունքի և Մերձավանի դպրոցականների միջև:

Կազմակերպվել է բացօթյա համերգ համայնքի բնակչության համար՝ համայնքի շնորհալի և հրավիրված երգիչների մասնակցությամբ:

Համայնքում երեխաների ամառային հանգիստը հետաքրքիր կազմակերպելու և Փարաքար սպորտ դպրոցի բռնցքամարտի ստները մասնակցել է Հայաստանի պատանիների բռնցքամարտի առաջնությանը, ինչպես նաև Վլ. Ենգիբարյանի հիշատակին նվիրված մրցումներին:

կազմակերպված մրցաշարերին: Մշակույթի տանը գործում է «Միլագրո» սպորտային պարերի համույթը, «Փարաքարի կանայք» աջակցության հասարակական կազմակերպությունը:
Մշակույթի տանը գործող գրադարանները արձանագրել են հետևյալ հաճախելիությունը. Փարաքարի գրադարան՝350, Թաիրովի՝ 500:

Համայնքի դպրոցական երեխաների ամառային հանգիստը հետաքրքիր կազմակերպելու համար Փարաքարի և Թաիրովի մշակույթի տներում հունիսի 15-ից օգոստոսի 15-ը կազմակերպվել է բակային ճամբար, որտեղ հաճախել են թվով 65 երեխա: Ճամբարի փակման ավարտը ազդարարվել է խարույկով և հրավառությամբ:

Փարաքարի մշակույթի տանը գործող «Թիթեռնիկներ» և Թաիրովի մշակույթի տանը գործող «Երիվան» պարային համույթները մասնակցել են Վրաստանում կայացած պարարվեստի մրցույթին և վերադարձել՝ մրցանակներով:

Փարաքարի մշակույթի տանը գործող «Միլագրո» սպորտային պարային համույթը մասնակցել է Մինորա մշակույթի կենտրոնի կազմակերպած մրցույթին և արժանացել պատվոգրի:

Մեծ շուքով հոկտեմբերի 1-ին նշվեց Փարաքար գյուղի կազմավորման 2205-ամյակը, հոկտեմբերի 26-ին՝ Թաիրովի 70-ամյակը:

Նոյեմբերի 1-ից 5-ը անց է կացվել բոնցքամարտի բաց առաջնություն նվիրված Թաիրով գյուղի 70-ամյակին:

Փարաքարի մշակույթի տանը կազմակերպվել է Ամանորին նվիրված միջոցառումներ համայնքի երեխաների մասնակցությամբ:

IX. Նախադպրոցական հիմնարկներ

- մանկապարտեզներում կազմակերպվել են ցերեկույթներ Սուրբ ծննդյան, մայրության, գարնան գալու և զատիկի, հաղթանակներին և երեխաների պաշտպանության տոների կապակցությամբ,- հունիսի 1-ը՝ երեխաների պաշտպանության միջազգային օրը, հրավիրվել էին մուլտ. հերոսներ, նրանք զվարճացրեցին երեխաներին, մանկապարտեզի բակում կազմակերպվեց տոնախմբություն, անցկացվեցին հետաքրքիր խաղեր և երեխաների հյուրասիրություն:
-հունիսի 1-ին մանկապարտեզի 16 սան մասնակցել է Գագիկ Ծառուկյանի կողմից կազմակերպված սպորտային միջոցառմանը՝ նվիրված երեխաների պաշտպանության օրվան՝ Երևանի «Միկա» մարզադահլիճում:,
- հունիսի 20- ին և 30 –ին Փարաքար համայնքի մանկապարտեզներում անցկացվեց «Հրաժեշտ մանկապարտեզին» միջոցառումը, երեխաներին տրվեցին նվերներ, գրենական պիտույքներ, ավարտական վկայականներ և հուշալբոմներ /վինետկա/, ինչպես նաև ամբողջ տարիների ընթացքում կատարած ձեռքի աշխատանքները: Համայնքի մնակապարտեզների սաներից 56 –ը պատրաստվում է գնալ դպրոց: Միջոցառումից հետո երեխաները հյուրասիրվեցին:
- կազմակերպվել են բաց պարապմունքներ մայրենի լեզվից, մաթեմատիկայից, ռուսերենից, անգլերենից, ֆիզկուլտուրայից՝ ծնողների ներկայությամբ,
- մանկապարտեզների խմբերի միջև կազմակրեպվել են նկարչական և սպորտային մրցույթներ,
- երեխաները իրենց ծնողների ուղեկցությամբ այցելել են մանկական սրճարան,
- ավագ խմբի երեխաները այցելել են Էջմիածնի Մայր տաճար, մանկական երկաթուղի:
Մանկապարտեզի բոլոր աշխատակիցները անցել են բուժզննում:

Փարաքարի մանակապարտեզում կատարվել է կապիտալ վերանորոգում, ձեռք են բերվել նոր երեք տեղանոց մահճակալներ, պահարաններ,վերենորոգվել են զգեստապահարանները:

Ինչպես միշտ, այս տարի ևս կազմակերպվել է ամանորյա ավանդական համայնքային միջոցառումներ, որոնք մեծ ուրախություն ստացել են նվերներ և ամանորին նվիրված միջոցառման տոմսեր:

X. Արվեստի և մշակույթի բնագավառ

ՓԱՐԱՔԱՐԻ «ՀՈՎԻԿ ԷԴԳԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-Ի 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Ամիս	Միջոցառումների անվանումները	Անցկացման վայրը
փետրվար	Համերգ միջոցառում նվիրված Տեարն Ընդառաջ տոնին	Փարաքարի «Սուրբ Մարիամ Աստվածածին» եկեղեցի
փետրվար	Ա.Բաբաջանյանի երաժշտական քոլեջի ուսանող՝ դպրոցի սան Նաիրի Կոստանյանի համերգը	Փարաքարի արվեստի դպրոց
մարտ	Մասնակցություն Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր քանոնահարուհի Ծովինար Հովհաննիսյանի 10 օրյա վարպետության դասընթացներ	Փարաքարի արվեստի դպրոց
մարտ	Համերգ նվիրված «Կանանց միջազգային օրվան»	Փարաքարի արվեստի դպրոց
մարտ	Համերգ ցուցահանդես«Առաջին քայլեր» առաջին դասարանի աշակերտների կատարմամբ	Փարաքարի արվեստի դպրոց
մարտ	Հանրապետական Արդ-Մյուզիկ մրցույթ/խեցեգործության դասարան/	Երևանի Սարաջևի անվան եր.դպրոց
մարտ	Համերգ փողային նվագախմբի կատարմամբ /Տավիղ մրցույթ փառատոնի տոնահանդես/	Ա.Բաբաջանյանի անվան համերգասրահ
ապրիլ	Համերգ ՀՀ վաստակավոր արտիստուհի Երևանի պետական կոնսերվատորյայի պրոֆեսոր դաշնակահարուհի՝ Անահիտ Ներսիսյանի կատարմամբ	Փարաքարի արվեստի դպրոց
ապրիլ	Համերգ նվիրված «Մայրության և գեղեցկության» օրվան Գյումրիի « վերածնունդ» միջազգային 8-րդ փառատոնի մասնակիցների կատարմամբ	Փարաքարի արվեստի դպրոց
ապրիլ	Սոլֆեջո և երաժշտական գրականության մարզային մրցույթ	Էջմիածնի թիվ 1 երաժշտական դպրոց
ապրիլ	Ցուցահանդես «Գեղեցիկը իմ աչքերով» խորագրով, մարզի արվեստի դպրոցների աշակերտների աշխատանքների նկարչություն, խեցեգործություն, գոբելեն, ասեղնագործություն	Փարաքարի արվեստի դպրոց
ապրիլ	Վերածնունդ 8-րդ միջազգային մրցույթ փառատոնի մասնակցություն /ժող գործիքների համույթ, 4 դաշնամուր, 1 ջութակ, 2 քամանչա, 2 դասական վոկալ/	Ք.Գյումրի,
ապրիլ	Համերգ	ք.Երևան, «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր

մայիս	Համերգ՝ նվիրված արվեստի դպրոցի հիմնադրման 35-ամյակին	գ.Մերձավան միջնակարգ դպրոց
մայիս	Համերգ՝ նվիրված ՀՄՊ հաղթանակի և Շուշիի ազատագրման օրվան, մայիսի 9-ին	Փարաքարի մշակույթի տան հրապարակ
մայիս	Համերգ	գ.Այգեկ միջնակարգ դպրոց
մայիս	Համերգ	գ.Բաղրամյան միջնակարգ դպրոց
մայիս	Հանդիպում ՀՀ կոմպոզիտորների միության նախագահ Արամ Սատյանի և կոմպոզիտոր Վահրամ Բաբայանի հետ	Փարաքարի արվեստի դպրոց
մայիս	Համերգ՝ Փարաքարի Հիմնական դպրոցի, Փարաքարի և Թաիրովի միջնակարգ դպրոցների աշակերտության համար	Փարաքարի մշակույթի տուն
մայիս	Համերգ «Ուդուլի» տոլմայի համահայկական փառատոնի օրը	Մուսալեռի հուշարձան
մայիս	Համերգ	գ.Պտղունք միջնակարգ դպրոց
մայիս	Համերգ՝ նվիրված Հայաստանի առաջին հանրապետության օրվան	Փարաքարի մշակույթի տուն
մայիս	Համերգ՝ նվիրված Հայաստանի առաջին հանրապետության օրվան	Էջմիածնի սակրավորային զորամասում
մայիս	Փողային նվագախմբերի «Հնչիր շեփոր հաղթական» Հանրապետական փառատոն և համերգ	Ք.Գյումրի
հունիս	Համերգ	ք.Գյումրի, Շիշյանի անվան թիվ 6 երաժշտական դպրոց
հունիս	Կիթառի դասատու Լուսինե Դավոյանի դասարանական համերգ	Փարաքարի արվեստի դպրոց
հունիս	Մենահամերգ՝ դաշնամուրի 7-րդ դասարանի աշակերտուհի Կարինե Սահակյանի կատարմամբ	Փարաքարի արվեստի դպրոց
հունիս	Հանդիպում Արվեստի դպրոցի շրջանավարտների և նախկին դասատուների հետ	Փարաքարի արվեստի դպրոց
հունիս	Համերգ նվիրված դպրոցի 35 ամյակին /դաշնամուրի և ջութակի դասարան/	Փարաքարի արվեստի դպրոց
հունիս	Համերգ նվիրված դպրոցի 35 ամյակին /ժող գործիքներ և փողային դասարան/	
հունիս	Հոբելյանական հաշվետու համերգ և ցուցահանդես՝ նվիրված դպրոցի հիմնադրման 35-ամյա հոբելյանին	Փարաքարի արվեստի դպրոց
հուլիս	Մունետիկ ստեղծագործական կենտրոնի կազմակերպված ամառային հանգիստ 20	Ապարան, գ. Լուսագյուղի հարակից անտառ

հոկտեմբեր	Համերգ նվիրված Փարաքարի [illegible]	
հոկտեմբեր	Ժող նվագարանների հանրապետական մրցույթ առաջին փուլ	Փարաքարի արվեստի դպրոց
հոկտեմբեր	Համերգ նվիրված Ուսուցչի օրվան	Փարաքարի արվեստի դպրոց
հոկտեմբեր	Համերգ Կահվեջյան համերգասրահում	Ք.Երևան
հոկտեմբեր	Համերգ Ա.Բաբաջանյանի համերգասրահում	Ք.Երևան
հոկտեմբեր	Մինորա մշակութային կենտրոնի կազմակերպած նկարիչների մրցույթ «Էտիուդ» 5 մասնակից	Ք.Երևան
հոկտեմբեր	Ժող նվագարանների հանրապետական մրցույթ երկրորդ փուլ Երգչախմբային ընկերության դահիճ	Ք.Երևան
հոկտեմբեր	Համերգ Ա.Բաբախանյանի կատարմամբ /դաշնամուր/	Փարաքարի արվեստի դպրոց
հոկտեմբեր	Ժող նվագարանների հանրապետական մրցույթի մրցանակաբաշխություն խրախուսանքի դիպլոմ 4-րդ կարգ Ա.Խաչատրյան համերգասրահ	Ք.Երևան
նոյեմբեր	Համերգ նվիրված Թաիրով գյուղի 70 ամյակին	Գ.Թաիրով
նոյեմբեր	Համերգ «Երևանյան Աշուն» ազգային ակադեմիական թատրոնում	Ք.Երևան
նոյեմբեր	Մինորա մշակութային կենտրոնի կազմակերպած նկարիչների մրցույթ «Էտիուդ» մրցանակաբաշխություն 2-րդ մրցանակ	Ք.Երևան
նոյեմբեր	Հանդիպում Երևանի ԵՊԿ-ի պրոֆեսոր երաժշտագետ Արմեն Բուդաղյանի հետ	Փարաքարի արվեստի դպրոց
նոյեմբեր	Չեխիայի հանրապետության Լիցիդե քաղաք ուղարկվել են 9 աշակերտի նկարներ	Փարաքարի արվեստի դպրոց

դեկտեմբեր	Մասնակցություն Արմավիրի մարզի երաժշտական և արվեստի դպրոցների հաշվետու համերգին	Ք. Արմավիր